

# ՀԱՅՎԱՐԱՆԻԹԻՒՆԸ ԵԿՐՈՊԱՅՈՒՄ

ՊՐՈՖ. Դ. Ա. ՇՈԽՈՒՄՅԱՆ

(Նաբառեակութիւն 1)

Եւգենիոս Բորէ ծնւեց Անժէրում 5-ն օգոստ. 1809թ.: Նորահայրը, որ նախկին զլուխ էր մի բատալիսնի, մեռաւ 1812-ին: Նաիւր առաջին ուսումը ստացաւ իւր հայրենի քաղաքում և, 1826-ին մտաւ Ստանիսլասի կոլլէժը (գիմնազ) Պարիզում, ուր յաջորդարին նա տարաւ «պատէի մրցանակը» ֆիլոսոֆացութիւնից, ընդհանուր կոնկուրսի միջոցին: Նա կորցրեց իւր մօրը 1828-ին: Իրաւաբանութեան դպրոցի դասընթացքը անցնելուց յետոյ նա նւիրւեց լեզուների ուսումնասիրութեան: Իւր մօր բարեպաշտութեան խրառ-ների ազգեցութեան տակ նա բարեկամութիւն կցեց դը Լամենէի հետ (de Lamennais<sup>2</sup>), որը խրախուսեց նորան իւր ուսումնասիրութիւնների մէջ: 1834-ին, երբ Լըւայան դը Ֆլորիւալը Խոալիա գնաց, այն ժամանակայ կրթական մինիստր Գիզօն նշանակեց նորան պրոֆեսորի փոխանորդ Արևելեան կենդանի լեզուների Դպրոցում: Լամենէն այդ առիթով գրեց նրան. «Ես շնորհաւորում եմ քեզ այն աշակերտների քանակութեան համար, որոնք լսում են քո դասընթացը և այն գիւտերի համար որ արել ես հայոց դրականութեան մէջ»: Այդ ժամանակ Բորէն Ասիական Ընկերութեան

1) «Մուրճ» 1891թ. № 1, 3, 7—8 և 9.

2) Նորա «Paroles d'un Croyant» թարգմանւած է հակերէն պ. Ռ. Բերեբեանի ձեռքով, Կ. Պոլիս, 1871թ..

ամենազործօն անդամներից մէկն էր: Նա շարունակեց իւր դասընթացքը մինչև 1835 թւականը և այդ տարւայ վերջը նա գնաց վենետիկի Սր. Ղազարը, սոտանձնելով մի գրական յանձնարարութիւն: Նա այնտեղ տպել տւեց մի Տեղեկագիր վանքի ու միաբանութեան մասին, որի անդամ նշանակւեց նա: Ահա թէ այդ ասիթով ինչ գրեց նրան դը Լամբնէն. «Դու գեղեցիկ բաներ տեսար, դու քեզ ամրացրել ես այն երկրի լեզւի մէջ, ուր, ասում են, տապանը կանգ առաւ, և դու այժմ ակադեմիկոս ես... Ես մեծ ուրախութեամբ կը կարդամ այն տեղեկագիրը, որի մասին դու ինձ ծանուցումն ես արել: Սր. Ղազարի կրօնաւորները արդին հրատարակել են մի այդպիսին, որ պարունակում է պատմութիւնը նորահիմնողի և այն անհաւատալի գժւարութիւնների, որոնց նա պէտք է յաղթէր այն տեղում հաստատւելու համար, ուր նոքա այն ժամանականից դէս այնքան բարգաւաճել են: Դժբախտարար, մի տարի յետոյ, Բորէն, տեսներով որ Լամբնէն հակառակում է եկեղեցու հեղինակութեանը, բաժանեց նորանից: 1836-ին նա դառաւ Univers catholique (Կաթոլիկական Աշխարհ) թերթի խմբագիրներից մէկը: Նա այն ժամանակ հրատարակել էր Journal Asiatique թերթում առ 1833 թ. (էջ 271—198): Ողբէկ. Պոլսի առման մասին, որ հեղինակել էր մի ոմն Աքրահամ, թարգմանած ֆրանսիական Ազգային Գրադարանի ձեռագրից № 80 (տես Բրոսսէի հրատարակութեան XXI. հատորը էջ 307—314), և 1835-ին (էջ 293—7) մի քաղաքածք Ուռնա (Երեսա) քաղաքի առման մասին գրած Ողբից: Նա նոյնպէս վերջացրեց խմբագրել մի աշխատութիւն Հայաստանի մասին առհասարկ, Univers pittoresque թերթի համար, որ լոյս տեսաւ 1838-ին 144 երկսին երեսներով և բազմաթիւ նկարներով: Այն ժամանակ հանրային կրթութեան մինիստրը և Արձանագրութիւնների ու զեղեցիկ դպրութեան Ակադեմիան բարձեցին նորա վերայ մի դիտական առաքելութիւն Արևելքում: Նա ուղևորւեց 1837 թւականի սկզբում: Ճա գնում եմ, ասում է նա, այցելելու այն երկիրը որ քրիստոնէութեան որրանն է եղել, ուսանելու այն լեզուն, որ խօսում էին այն տեղ և քննելու նորա լիշտակարարանները (մօնումէնտ): Կարճ ժամանակ մնալով Վիեննա, Տրիեստ և Սիրա, նա հասաւ կ. Պոլիս, ուր

նա սարքւեց մի հայկական ընտանիքում՝ «Արևելքի ձեռքը բռնելու համար»։ Բացի հայերէնից նա զիտէր պարսկերէնը, արաբէրէնը, տաճկերէնը, երրայերէնը և փիտնիկերէնը։ Կ. Պոլսից նա գնաց երգերում, ապա Թաւրիզ, ուր նա մի ուսումնաբան հիմնեց, որ նա մինչ 1839 թ. ինքը կառավարեց։ Վերջապէս նա հաստատեց Նոր-Զուղացում Սովահաննի մօտ (29 ապրիլի 1840 թ.), ուր նա իր աշակերտներ ունեցաւ մի քանի պարսկիներ նշանաւոր տներից և որտեղից նա ուզզեց Պարիզ մի քանի գիտնական գեկուցումներ։ Նա վերադարձաւ Պարիզ երկու տարի աւելի ուշ, 1842 թւին, բայց նորա հետաքրքրական աշխատութիւնը «Փղթակցութիւններ և Յիշատակարաններ մի ճանապարհորդի» Արևելքումն արդէն 1840-ին լոյս էր տեսել Պարիզում։ 1843-ին նա մի ճանապարհորդութիւն արաւ Հռոմ, ուր նա տեսակցութիւն ունեցաւ պապի մօտ, ապա նա մի երկրորդ անգամ գնաց Կ. Պոլիս։ 1846-ին նա հրատարակեց *Univers catholique* (Կաթոլիկական Աշխարհ) թերթում մի թարգմանութիւն Մովսէս Կաղանկառուացու Աղւանների Պատմութեան (որ արտասովեց *Nouvelles Annales des Voyages* 1848 թ. ծանօթութիւններով Վիենն զը Սէն-Մարտէնի)։ 1847-ին նա այցելեց Արխիտեղագոսը և 1848-ին Ֆրանսիական կառավարութեան կողմից չանձնարարւեց Երուսաղէմ գնալ՝ ուսումնասիրելու համար սուրբ տեղերի խնդիրը։ Այդ առարկայի մասին նա հրատարակեց մի բրոշիւր 74 էջից բաղկացած՝ «Սուրբ տեղերի խնդիրը»։ Այդ խնդրով աւելի ուշ զբագւեց նաև Վիկտոր Լանգլուան։

Վճռած լինելով այսուհետեւ նւիրւել եկեղեցական կրչման, Բորէն հոգևորականութիւն ընդունեց 1850-ին և վերադարձաւ Պարիզ։ Բայց յաջորդ տարին նա պէտք է վերադարնար Կ. Պոլիս, ուր նրան յանձնեց Բերէկի դպրոցի կառավարութիւնը։ Երեւ այցելու, նա ամեն տարի այցելեց Գմբւռնիա, Սանտորին, Նաքսի, Սալոնիք, Մոնաստիր և այլն։ Կրիմի պատերազմի ժամանակ նա կաղմակերպեց կառքեր վիրաւորների և հիւանդների համար (ամբիւլանս) և նւիրեց իրան Վարնայի խոլերականներին։ 1860-ին նրան յանձնեց զեկուցում տալ բուլգարացիների շարժման մասին գէպի հռոմայական եկեղեցին, և 1866-ին նա նշանակւեց մշտական քարտուղար Առաքելութեան Միաբանութեան (Congrégation de la

Mission), որի ընդհանուր գլուխն եղաւ 1874-ին, նաև մեռաւ Յ մայիսի 1878 թ., ցաւ պատճառելով այն ամենքին, ով նորան ճանաչել էր: Նորա յաջորդին է Անտուան Ֆիա (Antoine Fiat), որին, կրկնում ենք շնորհակալութեամբ, պարտական ենք այս յօդ- ւածի կենսագրական մանրամասնութիւնների համար բարեկալու և անձնւեր միսիոների մասին:

Էւարիստ Պրիւդ'հոմ (Evariste Prud'homme): Այդ հայկաբանի աշխատութիւնները ցրւած են ամսաթերթերում, և մենք կարծում ենք մեր լնթերցողներին ծառայութիւն մատուցանել՝ այսաեղ նոցա մի առ մի թւելով: Նա սկսեց մի յօդածով Արևելքի Տեսութեան մէջ (Revue de l'Orient) 1861 թ. (Նոր շարք, հատոր XIII): Հայերի ազգային սահմանադրութիւնը խորագրով, թարգմանութիւն հայերէնից. 1863—4-ին նա հրատարակեց նոյն թերթի մէջ մի թարգմանութիւն Արիստակէս Լաստիվէրդցու, համաձայն Վենետիկի տպագրութեան (1845): Տասնու- մէկերորդ դարի այդ վարդապետը գրել է պատմութիւնը Անիի կոր- ծանման Յոյներից և Աւլուկների արշաւանքների սկզբնաւորութեան (1000—1071): Թարգմանողը դէն է դցում Աստածաշնչից վերցրած բազմաթիւ ցիտաները: Ճարտասանական և ողբային եղանակը, ասում է Ֆիւլ Մոհլը, (Mohl), գերիշխում է այդ հեղինակի մէջ և դժւար լնթեռնելի է գարնում նորան, բայց նա չի թազցնում հայերի սխալները, դաւաճանութիւնները և մեզ թոյլ է տալիս տեսնել պատճառները և միջոցները այս երկար ու աղիողորմ ողբերգութեան, որի ամբողջ լնթացքը միայն արիւնով և աւերում- ներով է դրոշմածու: Ասիական Թերթում 1863 թ. (VI-դ շարք էջ 400—475) Պրիւդ'հոմը հրատարակեց Զենոր Գլակի Տարոնի Պատ- մութիւնը, թէ ինչպէս հայերը քրիստոնէութիւն ընդունեցին (բնագիրը հրատարակւած է և. Պոլսում 1708 թւին և Վենետիկում 1832 թւին<sup>1)</sup>), ժամանակակից է Ֆիւլ Մոհլը իւր գեկուցման մէջ,

<sup>1)</sup> Վիկտոր Լանգլուան հրատարակեց նորա թարգմանութիւնը, Խմբագրութեամբ Ս. Էմինի և. պոլսեցու, որ չը պէտք է շփոթել Մոսկավ Ս. Էմինի հետ.

Տարօնի գաւառի պատմութիւնն է Ասորիքի սահմանի վերայ, որ լուրջ ընդդիմադրութիւն ցոյց տւեց Տրդատի կրօնափոխութիւնից յետոյ Աշ-րդ գարում. այնտեղ հաստատել էր հնդկացիների մի զաղթականութիւն, բայց հեթանոսները տասպալւեցին, և սուրբն Գրիգորը հրամայեց Զենոբին, որ ականատես էր, գրել անցքերի պատմութիւնը Ասորիքի եկեղեցիների համար։ Ասիսկան Ընկերութեան նիստում առ 12 փետրւարի 1864 թ. Պրիւդ'հոմը մի քանի մանրամանութիւններ տւեց յունական և լատինական առարկաների մասին, որ վերագրում են Ազիզեանին և որոնք պահպանւած են հայերէն թարգմանութեան մէջ և որոնց ընագիրները կորած են (Տես Մխիթար Գոշի<sup>1</sup> Վենետիկի հրատարակութիւնները 1842 և 1853 թ. յաւելւածով)։ Ասիսկան թերթի ՎI. շարքի ՎII. հասորի մէջ, նա թարգմանեց հանգուցեալ պրոֆեսոր Գերովբէ Պատկանեանի յաւագոյն աշխատութիւններից մէկը՝ «Փորձ Սասանեանների առնմի Պատմութեան հայոց պատմագիրների հա-

<sup>1)</sup> Յօդուածի հեղինակ պրոֆ. Շռումպֆը, հակառակ իւր իսկ կարծիքին գրաֆիկական տառապարձութեան առամելութեան մասին, Գոշը գրում է Կօչե մինչդեռ պէտք է գրւի Գօչե. ալդ մանաւանդ ցաւալի է, որ ալդ մանւում է գրեթէ բոլոր անունների վերաբերմամբ Ակոպէս գիտնական պրոֆեսորը մի ալ տեղ Գարեն գին անունը զրում է Կարէկինե, փոխանակ գրելու Գարէգուն. բայց մինսուն ժամանակ նա զրում է Պատկանեան անունը Բագազիան, ինչպէս և հարկն է. ապավիտվ Ակ» տառով նա տառապարձում է թէ մեր Գ և թէ մեր Կ տառերը. Որ սխալ և շփոթ տառապարձութիւնը մի դաստարկ իմսդիր չը պէտք է համարել մանաւանդ լիքագէտների համար և որ դա կարող է շփոթեցնել հայերէնը օտար լեզուներով գրած գրքերով ուսանողներին, — ալդ մասին հաստատ կարմի է ասել որ լարգելի հեղինակը ինքը համոզած է, չետեսապէս մենք անինջ խորհուրդ ենք տալիս պ. Շռումպին, նորա ալս գեղեցիկ աշխատութեան առանձին հրատարակելու դիտաւորութիւնը ի կատար ածելուց առաջ Քրանսերէն գրած լատով անունները արևելեան մի հայ հայկաբանի ձեռքով սրբազրել տալ, որպէս զի մեր Բ, պ, Գ, Լ, Դ, և Ե տառերի, Կարող ենք հաւատացնել հեղինակին, որ նորա աշխատութեան արժանիքը ավտպիսով մի տիտղոսով ամելացած կը վնի, չը խօսած արդէն այն մասին որ նա մի օրինակելի դաս էլ տած կը վնի մեր արեմտեան գրագէտներին.

Մանօթ. Թարգմ.

մաձայն, և Ղ. հատորում՝ «Քաղաքածք դրբեց խորագրած՝ Ասկեփորիկ, մեկնութիւններ սուրբ գրքերի մի քանի տեղերի, գրւած հրամանով Հեթում Ի., թարգմանութիւն աշխարհիկ հայերէնից համեմատութեամբ գրաբառ բնագրի և աւրիստ Պրիւդ՝ հօմիւ Վերջապէս Ասիական թերթում, VII. շարք հատոր XVII, նա հրատարակեց Պատկանեանի ամենանշանաւոր գործի՝ «Հետազօտութիւններ հայերէն լեզւի կազմութեան մասին» թարգմանութիւնը, Դիւլորիէի ծանօթութիւններով և յաւելումներով։ Այդ աշխատութիւնը, ասում է Երնէստ Ռինան (իւր զեկուցման մէջ առ 29 յուն. 1871) թւում է թէ գրւած է Բոպպի լպրոցի լաւ սկզբունքների համաձայն։ Նա շատ լաւ ցոյց է տալիս հայոց բառքանի տեղը իրանական գերդաստանի մէջ, նորա առանձնայատուկ ազգակցութիւնը զենդերէնի հետ, այն զառամեալ գրութիւնը, ուր նա հասել է քերականական ֆիեքսիոնների կողմից, մի ողորմելի դրութիւն, որից աւելին միայն նոր պարսկերէնն է ներկայացնում։ Ճիշդ է որ հեղինակը ինքն էլ նկատում է (էջ 103) թէ Հայերը իրանց լեզւի նմանութիւնով և իրանց ցեղով պատկանում են իրանական մեծ ցեղին, բայց այս սինդումները ոչնչով չեն ապացուցում, և թւում է թէ Փակտերը հերքում են այն։ Աւելցնենք նաև որ Արևելքի Տեսութեան մէջ 1865 թ., IV. շարք, հատոր I, Պրիւդ՝ հօմը թարգմանեց ռաերէնից Մ. Էմինի մի աշխատութիւնը՝ Հայկական այլբրենարանի մասին։ Միւնոյն թերթում, որի հրատարակութիւնը դադարեց 1865-ին, նա թարգմանել էր Էմինի աշխատութիւնը Հայոց հեթանոսութեան մասին։ Մենք այնուեղ գտնում ենք նաև (1868-ին), հայր Խորէն Գալֆայեանի Արշակ II ողբերգութեան թարգմանութիւնը։ Մենք վերջացնում ենք Երնէստ Ռինանի խօսքերով՝ Հետարիստ Պրիւդ՝ հօմը մեռաւ շատ վաղօրօք. այդ բարեխիղճ և տեղեակմարդը ունէր միայն 43 տարեկան հասակ (տես մեր յօդւածը Վիկուր Լանդուախ մասին)։ Նորա սիրած պրոէկտոն էր Հայաստանի գրադարանների հետազօտութեան մի ճամբորդութիւն անել, նա այնպիսի ծանօթութիւն ունէր հայերէնի, որից ափսոս է որ չը կարողացաւ աւելի օգուտ քաղել։

Յովսէֆ Անդրէաս Պատուէլը իւրիաս (Joseph André)

Gatteyrias) ծնւեց 1855թ. և մեռաւ 28 մայիսի 1883թ.: Աշակերտ է. Դիւլլորիէի և պ. Ժիւլիէն Վինսոնի, պրովենոր Հնկերէնի (hindoustani) և տամուլի (tamoul) Արեւեան լեզուների դպրոցում՝ նա առաջինն էր որ ստացաւ դպրոցի դիվլումը հայերէն լեզուի համար: 1880-ին նա մի գերազանց թարգմանութիւն տւեց Վարդանի Ողբի՝ Հայաստանի դժբախտութիւնների և սուրբ Վարդան Գողթնեցու մասին, գրւած՝ արաբների կողմից երկիրը զբաւելու առ իրթով (Ասիական թերթ, 7-րդ շարք, հատոր XVII., տես հայր Վեռնդ Ալիշանի մօնողը աֆիան, Վենետիկ, 1880, թարգմանած իտալերէն): Առաջ բերենք այս առիթով պ. Էրնէստ Որնանի գեղեցիկ խօսքերը (հատոր XVIII, 29 յունիսի 1881): «Հայաստանը Արևելքի միակ ազգն է որ իսլամի կողմից ճիշդւած լինելու զիտակցութիւնը ունեցաւ: Ուրիշ տեղ՝ ոչ մի բողոք, ոչ մի ազաղակ: Գոնէ զատելով մեզ հասած լիշտակարաններից: Որտեղ է Եգիպտոսի ողբը: Որտեղ է Ասորիքինը: Անձնատուր լինելու այդ տեսակը անկասկած առաջ է գալիս նրանից, որ ռայաների դրութիւնը շատ տանելի էր հեջիրի առաջին դերերում այն ցեղերի համար, որոնք միայն կրօնական պահանջներ ունեին: Բայց Հայաստանը, որ արաբների նւաճումների ժամանակ մի լուրջ քաղաքական կեանք ունէր, խօսք դտաւ ասելու գոնէ որ նա զգում է թէ մեռնում է: 1882-ին Գատտէցրիասը հրատարակեց մի շատ հետաքրքրական փաքրիկ պատկերազարդ հատոր՝ Հայաստանը և Հայերը (144 երես): Դա զիսաւորապէս մի պատմական ամփոփումն է: Ապա նա նւիրեց իրան վրացերէնի ուսումնասիրութեան, որ նա անհրաժեշտ էր համարում հայերէնի Փիլոզիական ուսումնասիրութեան համար. և նա հրատարակեց Revue de linguistique et de philologie comparée (1881) թերթի XIV-րդ հատորում՝ «Եղւաբանական ուսումնասիրութիւններ վրացիական գերդաստանի լեզուների մասին»:

---

Սենք ահա վերջացնում ենք մեր յօդւածը Փրանսիական հայկաբանների վերաբերմամբ: Արդէն նկատած կը լինե՞ն, որ խրախուսանքը երբէք նրանց չի պակասել, և այդ առիթով մենք կարող կը լինէինք ծանրանալ նոցա մասին արւած բարեխիղը քննադատու-

թիւնների վերայ այնպիսի մարդկանց կողմից, որպէս գիտնական արխէօլոգ Դեղիուէ Ռատուլ Ռոշէտ (Rochette 1789—1854), հռչակաւոր արևելագէտ Սիլւեստր Դը Ռասի (Sacy, 1758—1838), Յովակի Շուտէն Ռէնո (Reinaud, 1795—1867), արաբականի պրոֆեսոր Կոլէժ Դը Ֆրանս զալոցում, որին մենք պարտական ենք Վեսնդի թարգմանութիւնը Կարապետ Նահնազարեանի ձեռքով. Եղիպատագէտ Եթիէն Մարկոս Քատրըմէր (Etienne Marc Quatremère, 1782—1857), որի մի հայոց բառարանը պահուած է Պարիզի Ազգային Գրադարանում. Ժիւլ Բարթուլիմէոս Սէնտ-Հիլէր (Saint-Hilaire), որի համակրելի խօսքերը ներքեւ առաջ ենք բերում, և այլն: Ժամանակ առ ժամանակ, հետևելով Զրպետի և Զոհարի օրինակին, Պարիզում հաստատած հայերը, մանաւանդ երբ այդ քաղաքում գոյութիւն ուներ Մուրագեան վարժարանը (collège Moogt) դպրոցը, օգնութեան են հասել մեր հայագէտներին, Մենք մանաւանդ կը լիշենք արբա Գրիգոր Կապարաջի Կարապետին (Grégoire Kubaraguy Karapet), որը 1844-ին հրատարակեց Եղիշէի մի թարգմանութիւնը այս վերնագրով՝ Soulèvement national de l'Arménie chrétienne au v. siècle contre la loi de Zoroastre sous le commandement du prince Vartan le Mamigonian», որից առաջ նա 1843-ին հրատարակեց Փրանսերէն լեզով «Իշխան Վարդան Մամիկոնեանի, Հայաստանի V-դ դարի հերոսի, քաղաքական և պատերազմական կեանքի համառօտ պատմութիւնը, Հազար Փարպեցու, նորա քարառղար Եղիշէի պատմութիւնը լրացնելու համար»:

Տարաբախտաբար մեր գիտնականների գրւածները մեծ մասմբ ցրւած են հանդէսներում և նոյն իսկ լրագրերում, որպէս նաև այլ և այլ ակադեմիաների լիշտակարանների մէջ, երբեմն նաև այնպիսի հրատարակութիւններում, ուր ոչ ոք չի մոտածել նոցա որոնել, և կամ այնպիսի վերնագրերով են, որ ոչ մի հայագէտի ուշադրութիւնը չեն արթնացնիլ: Այսպէս մենք դաել ենք մի շարք շատ հետաքրքրական յօդւածներ Պոլ Նիկար'ի (Pol Nicard) այս վերնագրով՝ «Dipœnus et Scyllis, sculpteurs», հրատարակւած Փրանսիական անոիքւարների (Հնութիւնների) ազգային Ընկերութեան Եիշառակարանների մէջ (4-րդ շարք, հատոր Vlll, Պարիզ, 1877):

Դոքա գիտնական հետազոտութիւններ են Խորենացու 2-րդ գրքի զլուխ XII-ի վերայ, ուր ասւած է թէ Արտաշէսը իւր երկիրը տանել տւեց Դիանայի, Հերկուլէսի և Ապօլոնի ոսկեջրած բրնձիսայ արձանները, նոցա ազգացին աստուածութիւններին նորուած մի տաճարում կանգնեցնելու համար նորից յիշենք այդ առիթով որ Զրպետը նոյն այդ Յիշատակարաններում (Հատոր I, էջ 262) արդէն մի յօդւած էր հրատարակել Հին-Հայաստանի կառավարութեան և կրօնի մասին։ Քիչ ճանաչւած մանրամասնութիւններ կան նաև Էտիէն Շատուէլի (Chastel) դրւագքում՝ «Պատմութիւն հեթանոսութեան կործանման Արևելքի կայսերութեան մէջ», Պարիզ 1850։ Վերջապէս մենք կարող ենք առաջ բերել մի քանի յօդւածներ «Bibliothèque de l'Ecole des Chartes»-ից, բայց շատ հեռու չենք ուղում գնալ։ Բայցի գորանից, որպէս զի մեր ուսումնասիրութիւնը լիակատար լինի, մենք պէտք է խօսենք բազմաթիւ ֆրանսիացի ճանապարհորդների և հետազոտողների մասին, որոնք այցելել են Հայաստանը. բայց մենք այդ ամենը կ'ամփոփենք մի առանձին զլսում, և, մինչ այդ, մենք յօդւմ ենք մեր ընթերցողներին էլիզէ Ռըկլիւմի «Համաշխարհացին Աշխարհագրութեան» վերայ, կամ Վիւիէն դը Սէս-Մարտէնի «Աշխարհագրութեան նոր բառարանի» Arménie յօդւածի վերայ, հատոր I (Պարիզ, 1879, էջ 213—217)։

Այն աշխատութիւնները, որ մենք թւեցինք, անկասկած բաւական կը լինեն որպէս զի հայերը երախտագիտութեան յիշատակպահաննեն Ֆրանսիայի համար։ Մեր գիտնականները չեն բառականցել ուսանելու հայերէն լիզւի կազմը, այլ նոքա մանաւանդ աշխատել են պարզել Հայաստանի հնութիւնները, պատութիւնը, կրօնը և գրականութիւնը։ Լեզուն ուսումնասիրելով հանդերձ, որ անհրաժեշտ է նոցա հետազոտութիւնների համար, նոքա չեն մոռացել այդ լեզուն խօսող ազգը, և նոքա ուզեցել են նոյն իսկ ազգացին ոգու խորքը թափանցել։ Հետևապէս մենք համարձակւում ենք պնդել որ նոքա շնորհակալութեան արժանի ծառայութիւն են մասուցել Հայաստանին (Nous osons donc affirmer qu'ils ont bien mérité de l'Arménie)։ Ինչ վերաբերում է մեզ, նոցա յաջորդներին, չը ննջենք նոցա դափնիքների վերայ, այլ շարունակ յիշենք որ noblesse oblige։ Վերակենդանացնենք ուրեմն, շնորհիւ

նոցա մեզ թողած ժառանգութեան, Արարատի մեր եղբայրների այդ փառաւոր անցեալը և օգնենք նրանց սուրբ լեռան շուրջը կանգնեցնել Լուսաւորչի խաչը, որ Ազատութեան էմբլեմ է: Ցիշենք որ գիտնականները, գրականագէտները, բանաստեղծներն են եղել որ կարողացան ազատել Յունաստանը բարբարոսների ձեռքից, և թողոր այդ լիշատակը մեր ջանքերին խրախոյս ծառայէ: Ամենից առաջ Հայաստանի հետ ծանօթացնենք, այնժամանակ անարգւած քաղաքակրթութեան աղաղակը, այն քաղաքակրթութեան որը այնքան անգամ նա ազատել է, շուտով կը վճռի ճակատադիրը այն դժնեալ կառավարութեան, որի պատմութիւնը ամփոփում է Վիկտոր Հիւդոֆի այս ոստանաւորի մէջ՝ «Թիւրքերը անցել են այնոեղով, — ամենին ինչ աւերակ է և սուր! (Les Turcs ont passé là: tout est ruine et deuil!).

Մենք այժմ անցնում ենք Բելգիան, ուր հայկաբանութեան ներկայացուցիչն է պ. Ֆելիքս Նէւը: Այս գիտնականը բարի եղաւ մեր յօդւածը վերանայել և դրում է մեզ այդ առիթով. «Առանց տատանւելու պահանջնեցէք այն կարճ քաղւածքը որ դուք ամբողջապէս առաջ էք բերել և որը վկացում է իւր համակրութիւնը հայոց ազգի համար, որի հայրենասիրութիւնը միշտ զիմադրել է հալածանքներին և աղէտներին: Դուք շատ լաւ էք արել, պարոն, որ ձեր գիտնականութիւնը ծառայեցնում էք մի այլքան ազնիւ դատի համար»:

Պարոն Նէւ (Félix Jean-Baptiste Joseph Nève) ծնւել է Բելգիայի Աթ (Ath) քաղաքում Հենօ (Hainaut) դաւառում, 13 յունիսի 1816 թ.: Իւր ուսումը Լոււէնում (Louvain), և զերմանական Բննն ու Միւնխէն քաղաքներում ստանալուց յետոյ, նա գնաց Պարիզ, Փատրմերի, Ռենօի և Եօժէն Բիւրնուֆի դասերը լսելու համար: 1838-ին նա ստացաւ Փիլոսոփայութեան դոքտորի աստիճանը. 1841-ից արդէն նա պրոֆեսոր նշանակւեց Բելգիայի Լոււէն քաղաքի կաթոլիկական համալսարանում, իսկ աւելի ուշ նա այնտեղ դառաւ տիտղոսաւոր<sup>1)</sup> պրոֆեսոր հին գրականութեան և

<sup>1)</sup> Ֆրանսերէնում տիտղոսաւոր պրոֆեսոր նշանակում է այն,

արևելեան լեզուների: Խւր դրւածքով «Ներածութիւն արևելեան գրականութիւնների ընդհանուր պատմութեան, Լուլէն, 1844թ.» Նա վաղօրօք ցոյց տաեց որ կոչւած է ամենանշանաւոր արևելագիւններից մէկը դառնալու: Նա իւր ուսումնասիրութիւնները բաժանեց սանսկրիտերէնի և հայերէնի մէջ, միաժամանակ հետազոտութիւններ անելով Լուլէնի համալսարանի պատմութեան համար և այդ քաղաքի Երեք-Լեզուների Դպրոցի մասին (Collège des Trois Langues), մի կողմէ թողած մի մոնոգրաֆիան մի երիտասարդ արևելագէտի, Էօժէն Ժաքէի, կեանքի մասին: Մեզ չի պառկանում այստեղ՝ նկարագրել գիտնական պրոֆեսորի բազմաթիւ աշխատութիւնները Հնդկաստանի գրականութեան մասին. ինչ վերաբերում է հայերէնին, դեռ ևս 1841-ին պարոն Նէւլ թարգմանեց Univers թերթում առ 4 յուլիսի նարականի Երգերը սուրբ Սուաքեալներին նւիրած: Խւր վերը յիշատակւած «Ներածութեան» մէջ (էջ 51) Նա զասում է հայերէնը պարսկական գերդաստանի մէջ զենդիրէնի, պահաւերէնի, պարսերէնի, աւզաններէնի, բելուջերէնի, քուրդերէնի և օսերէնի հետ ։ Հայերէնը, ասում է Նա, երկար ժամանակ նկատուծ էր որպէս անկախ մի լեզու, բայց նա պատկանում է պարսկական գերդաստանին իւր արմատներով և իւր քերսկանական ֆլեքսիոններով։ Պարոն Նէւլ յենում է Փ. Ն. Պետերմանի և Ֆ. Վ. Բարիչյանի աշխատութիւնների վերայ. սակայն մենք չենք կարծում թէ սոքա այդպէս լինեն հասկացած հայերէնի դիրքը։

Ապրիլին 1843թ. լոյս էր տեսել Université catholique հանդէսում (Պարիզ, հատոր XVII, էջ 373 և հատոր XVII, էջ 49-52) մի քննութիւն Յովհաննէս ՎԻ կաթողիկոսի Պատմութեան, գործ Սէն-Մարտէնի, հրատարակւած սորա մահից յետով, որի մասին մենք իւր տեղում խօսել ենք։ 1845-ին պարոն Նէւլ հրատարակեց միևնույն հանդէսում (հատոր XX) մի յօդւած Եղիշէի Վարդանանց պատմութեան մասին, որ տասն և հինգ տարի առաջ Փ. Նէւլմանը անդլիերէն էր թարգմանել (Լոնդոն, 1830), աբեղայ Յովհէփ Կապուելետին՝ Խոալերէն (Վիեննա, 1840), Կապարաջին՝ Քրանսերէն

երբ մէկը կառավարութիւնից ստանում է պրոֆեսորի կոչումը։

Մանոթ. Թարգմ.

(Պարիզ, 1844) և Պետրոս Շանչեանը՝ ռաերէն (Թիֆլիս, 1853): 1855-ին, Ասիական թերթի 5-րդ շարք, հատոր V լոյս տեսաւ իւր Շուտածք Թովմա Մեծոփեցու և նորա Հայոց Պատմութեան մասին 15-րդ դարում (տես Դիւլորիէի զեկուցումը հայկական ուսմունքների յառաջդիմութեան մասին, Պարիզ 1867, 188 երես): Այդ նոյն տարին նաև թարգմանեց հայոց եկեղեցու երգերը ըստ Նարականի (Լուլէն, 1855): 1857-ին նաև աշխատակցեց Revue catholique հանդէսին (5-րդ շարք հատոր III) այս գրւածքով՝ Կոնստանտինը և Թէոդորը արևելեան եկեղեցիների առաջ, ուսւածք՝ քաղած յոյն և հայ աղբիւրներից. 1859-ին, այսինքն մի տարի աւելի առաջ քանի երր ժ. Հ. Պետերմանը իւր ուսւածքը հրատարակեց Բերլինի գիտութ. Ակադեմ. Յիշատակարաններում (1860, էջ 81—186), պարոն Նէւը հրատարակեց Belgique հանդէսում (հատոր V Ա, Բրիւսէլ, 1859): Առաջին խաչակիրների արշաւանքի բելգիական առաջնորդները: Յաջորդ տարին լոյս տեսաւ նորա Ըսկարագիր Թամերլանի և Շահրոխի պատերազմների արևմուեան Ասիայում ըստ Թովմա Մեծոփեցու հայոց անտիպ ժամանակագրութեան (տես Մémoires couronnées et autres de l'Académie de Belgique, հատոր XI, 158 էջ, Բրիւսէլ):<sup>1)</sup> 1861-ին նաև լոյս ընծայեց Revue catholique հանդէսից մի արտասալւածք (7-րդ շարք, հատոր XIX): Մի քանի արկածներ քրիստոնէութեան հայածանքից Հայաստանում 15-րդ դարում, առաջին անգամ թարգմանած հայերէնից Վրանսերէն (Լուլէն): 1862-ին լոյս տեսաւ իւր փորձը՝ Կոչումն Հոգոյն Սրբոյ հայոց պատարագում: 1863-ին նաև հրատարակեց՝ Ֆրիդրիխ Վինդիշման և բարձր Փիլոլոգիան Գերմանիայում (Պարիզ): Այդ գրւածքում նաև խօսում է մանաւանդ գիտնական գերմանացու այս վերնագրով աշխատութեան մասին՝ Հայերէնի հիմքը արիական լեզուների մէջ (Միւնխէնի Ակադեմիայի Յիշատակար., Փիլոսոփ. և Փիլոլոգ. բաժին, հատոր IV, 2-դ մաս), ուր խօսում է հայերէնի տեղի մասին արիական գերդատանի մէջ: Յունիսի 1866 պարոն Նէւը աշխատակցեց Revue catholique հան-

<sup>1)</sup> Այդ մշատակարանը ճերկապացւած է եղել վշեալ Ակադեմիական Կլասսների 2 օգոստ. 1838 թ.

դէսին (հատոր XXIV, էջ 332—344) Սուրբն Գրիգոր Լուսաւորչի քարոզների մի թարգմանութիւնով՝ Երրորդութեան անձերի որոշելու մասին (տես Ժ. Մ. Նմիդ՝ Reden und Lehren des heil. Gregorius des Erleuchters, թարգմանած հայերէնից. Ռեգենսբուրգ 1872, 268 էջ):

Վերջապէս 1866-ին լոյս տեսաւ պ. Նէւի գեղեցիկ գրւածքը՝ Քրիստոնէական Հայաստանը և նորա գրականութիւնը (Լուէն, VII+403 էջ), ուր հեղինակը ի մի է հաւաքում առաջուց հրատարակած իւր մի շարք փորձերը, որոնց աւելացնում է մի քանի նոր տեղեկութիւններ (զեկուցումը տես Լուէնի Muséon թերթում, հատոր V, էջ 652): Ահա նորա պարունակութիւնը. Ներածութիւն, փառարանական երգեր, Շարականը և ողբի երգեր. Կաթողիկոսներ՝ Սր. Գրիգոր Լուսաւորիչ, սր. Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի. Պատմութիւն՝ Եղիշէի, Յովհաննէս Կաթուղիկոսի, Մատթէոս Նզեսացու, Խաչակիրների առաջին արշաւանքի բելգիական առաջնորդները, Հայկական ազբիւրներ Մոնղոլների պատմութեան համար Ասիայում. Յաւելած՝ Պատմական կազմը ասորեցիների և Հայերի մէջ. Ասորական մեծ ժամանակադրութիւնը Բար-Հերբրուէսի:

Ահա թէ ինչպէս է խօսում պ. Բարթէլզմի Սէնտ-Հիլէրը<sup>1)</sup> Journal des Savants թերթում առ 1866 թ., էջ 730. Այս հատորը լոյս է տեսնում հէնց մի այնպիսի բոսպէին, երբ Հայաստանը ապաստում է եւրոպական գիւղումատիացից և պահանջում է Բերլինի կոնգրէսում 1878 թ. նրան խոստացած ընդորմները, որոնք սակացն դեռ չեն իրագործւած: Եւրոպան շատ համակրութիւն է պարտական այս փոքրիկ քրիստոնէական ազգին, որը գրեթէ մոլորւած է Ասիայի քիչ ճանաչւած մի ժամանում, բայց որը իւր հաւատը կարողացել է պահպանել 15 դար շարունակ բոլոր վտանգների և ճնշումների մէջ, որոնց նա զոհն է եղել և դեռ չէ դադարած զոհ լին ելու: Զի կարելի բաւականաչափ համակրութիւն ցոյց տալ այդքան թշւառու-

<sup>1)</sup> Բարթէլզմի Սէնտ-Հիլէրը, լաւոնի մանաւանդ իւր թարգմանութիւնով և ուսումնասիրութիւններով Արիստոտէլի, Փրանսիական Ակադեմիակի անդամ է և 80-ական թւականներին թէև ոչ երկար ժամանակ՝ Փրանսիական հանրապետութեան արտաքին գործերի մինիստր էր:

թիւններին և այդքան հաստատակամութեան. նա ունի մեծ արժանիք ունեցող կրօնական ու պատմական գրականութիւն, նա կարող է մեզ շատ բան սովորացնել այն յեղափոխութիւնների մասին, որոնց ասպարէզ են եղել Ասիայի այդ և նորա հարևան երկիրները... չը խօսած հայոց գրականութեան մասին որը պակաս նշանաւոր չէ եղել: Այս գեղեցիկ էջից յետոյ մենք առաջ ենք բերում պարոն նէւի համակրելի խօսքերը իւր աշխատութեան յառաջարանից (էջ ՎI): Պատմութեան մէջ հազւագիտ կրկնակի երևոյթով, հայոց ազգը, ուժեղ հաշալի հաւատարմութիւնով դէպի իւր բնաւորութիւնը և հաւատոր, դիմացաւ այն պատերազմներին և յեղափոխութիւններին, որոնք նորան այսպէս ասած կտրատեցին. նա ունի իւր գրական և ժամասացութեան լեզուում իւր կենդանութեան մի նշան, իւր յարատեսութեան գրաւականը. մարդ կարող է մտածել որ նա կոչւած է մի օր մասնակցութիւն ունենալու Ասիայի վերակենդանութեան գործում:

Բելգիայում հայկական ուսմունքը դեռ տեղ են գտնում Աս-  
սեօնի մէջ, որ միջազգային հանդէսէ և հրատարակում է 1882-ից  
Լուէնում Գրական-զիտնական Ընկերութեան ձեռքով: Պարոն նէւը  
նորա զլիսաւոր աշխատակիցներիցն է: Մենք գտնում ենք  
այնտեղ հետևեալ յօդւածները՝ Մի քանի տեղեկութիւններ Վանի և  
ուրիշ արձանագրութիւնների մասին Ա. Հ. Ալյոսի (Alyosse) և հան-  
գուցեալ Քերովիկ Պատկանեանի Ս. Պետերբուրգից. մի զեկուցում  
էմիլ դը Դիլոնի (Dillon) Ք. Պատկանեանի Հայաստանի պատմական  
գրականութեան գրախօսական ուրւազդի մասին, 1880 թ. (Աս-  
սեօն, հատոր I). դը Ռեստէնգի (de Restaing) քննադատու-  
թիւնը Մովսէս Խորենացու Աշխարհագրութեան, հրատարակութիւն  
հայր Արսէն Սուկրիի (Soukry), Վենետիկ 1881: Նարլ դը Հարլէն  
(Harlez) Յ-րդ հատորում, 1884 թ., քննադատում է դը Դիլոնի  
Հայկական ուսումնասիրութիւնները (ռուբրէն, մասն առաջին, հա-  
յերէնի յարաբերութիւնները հրանական լեզուների հետ, Խար-  
կով, 1884 թ.). Ֆելիքս նէւը հրատարակում է այնտեղ մի զեկու-  
ցումն Ասովկի պատմութեան, թարգմանութիւն է. Դիւլլորիէի, որի

առաջին մասը հրատարակել էր Կարիքը: 1887 թւականի հատուրում մենք գտնում ենք մի գեղեցիկ քննադատութիւն Պատկանեանի հրատարակութեան՝ Արծրունիների տան պատմութիւնը, վարդապետ Թովմա Արծրունու, Ա. Պետերոսուրդ, 1887: Եօթներորդ հատորում կայ պար. Նէւի յօդւածը՝ «Մի քանի նոր հրատարակութիւններ հայոց գրականութիւնից, լոյս տեսած Ասիայի և Եւրոպայի մի քանի քաղաքների տպարաններից (այն է՝ Հայոց մատենախօսութիւն<sup>1)</sup> 1563-ից մինչ 1883, հայր Գարեգնի, Վենետիկ, 1883, մի հատոր XXXII+754 երես. Քննական քերականութիւն հայոց լեզւի հայր Արսէն Այտինեանի, Վիեննա, 1866. Manuale lexicon armeno-latinum ad usum scolarum scripsit D. Iohannes Miskgian, professor linguae armenae in pontificio collegio urbano ac in pontificio seminario romano S. C. de propanda fide, Romae, 1887): Վերջապէս 1889-ին լոյս տեսաւ մի տեղեկութիւն Վիեննայի Տիփթարեանների Հանդէս Ամսորեայի մասին: Պարսն Նէւը յայտնում է այդ առիթով նաև լոյս տեսնելը հոկտեմբերից 1888 թ. Նեղոս շաբաթաթերթի Ալեքսանդրիայում, խմբագրութեամբ Անտոն Ռշտունու: Այդ թերթը դադարել է հրատարակել որովհետեւ այն հայ քահանան, որին պատկանում էին տոլարանի տառերը, պէտք է դնար Գալաց, Ռումինիայում, այնտեղ մի նոր թերթ հիմնելու համար<sup>2)</sup>:

Այսպէս ուրեմն տեսնում ենք որ Ֆելդիան ևս իրաւունք ունի հայ ազգի երախտագիտութեան վերայ: Յանկանանք որ այնտեղ գտնեն աւելի ու աւելի բազմաթիւ գիտնականներ պար. Ֆելդիս Նէւի շատդով գնալու համար և որ նոքա սրտին մօտ աւնեն այն գեղեցիկ տողերը որ այս համակրելի հայագէտը հրատարակել է զեռ ևս 1845 թւականին Université catholique թերթում (հատոր XX, երես 491). «Հայաստանը, ասում է նա, մի կողմով դիալում է յունական հնութեան,

<sup>1)</sup> «Մուրճ» ի ընթերցողներին պարտք ենք համարում լավանել, որ պրոֆ. Շուռմիի աշխատութեան մէջ վիշտած հաւ մատենագիրների գրւածքների խորագրերը մենք թարգմանում ենք ուղղակի Փրանսերէնից աշխարհաբառ, առանց ուշադրութիւն դարձնելու նոցա գրաբառ բնագրի իսկական վերնագրերի վերաբ:

<sup>2)</sup> Որ և հիմնած է «Արօր» անունով

Մանոթ. Թարգմ.

որից իւր գրականութիւնը այնքան բազմաթիւ փոխառութիւններէ արել թարգմանութեան միջոցով, և միւս կողմով նա դիպում է Արևելցիների ինքնուրոյն կեանքին Եթէ դարերի ընթացքում նորա քաղաքական դրութիւնները շատ տարբեր են եղել, բայց նորա կրօնական պատմութիւնը քրիստոնէական ազգի պատմութիւն է, և որպէս այդպիսին, նա չի կարող անտարբեր մնալ մի ժամանակ, որը, ինչպէս մեր ժամանակն է, ազգերի ժամանակագրութեան մէջ որպանում է նոցա սոցիալական մոքերի ոյժն ու բարգաւաճումը և որը այսուեղ ևս հարկադրւած է խոստովանել և ընդունել քրիստոնէական սկսրունքի պահպանողական ոյժը:

Եղափելով այժմ Գերմանիան, որպէս նաև գերմաներէն գրւած շէցցարական, աւստրիական և այլ աշխատութիւնները, մենք առ այժմ մի կողմ կը թողնենք այն ճանապարհորդներին և հետազոտողներին, որոնց իրանց նկարագրութիւններից դէնը ոչինչ չեն գրել: Այդ մասին կարելի է օդնութեան դիմել զուտ աշխարհագրական աշխատութիւնը, խորագրած Erdkunde (Երկրագիտութիւն), պարբերական հրատարակութիւնները՝ Globus, (Երկրագունդ), Ausland (Արտասահման), Petermanns Mittheilungen (Պետերմանի հաղորդագրութիւնները), Zeitschrift der Geographie und Erdkunde (Ամսագիր Աշխարհագրութեան և Երկրագիտութեան) և այնու Դա մի առանձին գործ է, որ շատ հետաքրքրական լինելով հանդերձ, այնուամենայնիւ չի մնում մեր աշխատութեան շրջանակի մէջ:

Գերմանիայում իսկական հայկաբանութիւնը սկսում է ներկայ XIX դարում պատմական և գրական գործքերով կ. Ֆ. Նէումանի (C. F. Neumann), որին յաջորդեց ծ. Հ. Պետերմանի (J. H. Petermann) լատիներէն դրած քերականութիւնը, որը տեղի տեղ լեզւագիտական փորձերին կ. Դիֆենբախի, Ֆ. Վինդիշմանի, Ռ. Գոչե, Պոլու զը Լագարժի (L. Diefenbach, F. Windischmann, R. Gosche, Paul de Lagarde): Մեծ ֆիլոլոգները, որպէս Բոպպը, Նլայլերը, Պոտուը, Եպիգէլը, Լասէնը, գեռ ևս հայերէն չը գիտեն կամ չեն իմանում ինչպէս օգտւեն նրանից. բայց վերջապէս Պօլոս

Դը Լազարզը և պրոֆեսոր Ֆրիդրիխ Սիւլէրը, Վիեննայից, նորան դասում են էրանական լեզուների շարքում: Գրականութեան ուսում-նասիրութիւնը առ այժմ դեռ շատ է զանց առնւած, բայց դորա փոխարէն վիլորդիան մեծ յառաջդիմութիւններ է անում, ինչպէս որ մենք այդ ցոյց տէինք լ'Արմենի թերթում առ 15 յուլիսի պարոն Բուգդէի մի գրքի առիթով <sup>1)</sup>: Այդ յառաջաղիմութիւնների շնորհիւն է որ սկսում են ուսանել բնագիրները լաւ քննադատութեան կանոնների համաձայն: Հանգուցեալ Ալֆրէդ Փոն Գուտշմիլը դորա սկիզբը դրեց իւր աշխատութիւններով Մովսէս Խորենացու և Ագաթանգեղոսի մասին, որպէս Աղոյի Բառմզարտները իւր ուսւածքով Մովսէս Խորենացու ճարտասանութեան մասին: Մենք հարկ չենք դատում ծանրանալ այս իրողութեան վերայ, որ մի գրականութիւն արդիւնաւէտ կերպով ուսումնասիրելու համար, ամենից առաջ պէտք է ունենալ իսկական բնագիրները, որոնցից հեռացրած կը լինեն արտադրողների սխալները, որքան այդ կարելի է: Եթէ այն, ինչ մենք ասացինք, վերաբերում է մանաւանդ գրաբառին, չը մոռանանք սակացն որ այժմ սկսում են զբաղւել նաև նոր գրականութիւնով: Էջապցիպի մի հրատարակիչ, պար. Վիլ-հելմ Ֆրիդրիխ արդէն լրց է ընծայել, զեկավարութեամբ պար. Արգար Յովհաննիսեանի, մի տասնեակ հատորներ «Արմենիստական» (Armenische Bibliothek) (գերմաներէն <sup>2)</sup>), և պար. Արթուր Լայստը (Arthur Leist) ժամանակ առ ժամանակ մի քանի թերթերում հրատարակում է հայոց նոր բանաստեղծութիւնների գերմաներէն թարգմանութիւնները: Այսպիսով ամեն բան ցոյց է տալիս լաւ ապագայ հայոց գրականութեան մշակման Եւրոպայում: Եթէ իսկ է որ XIX դարը միայն նախապատրաստական էպոխ է, հետեւապէս XX դարին կը պատկանի փառքը՝ հայկագեան գրականութիւնը այն աս-

<sup>1)</sup> Տես «Մուլճ» 1891 թ. № 2.

<sup>2)</sup> Նշանակութիւն տալով պ. Ա. Յովհաննիսեանի Armenianische Bibliothek (Հայկական Գրադարան) շատ օգտաւէտ հրատարակութեանը, թերեւ անկարենոր չէ ասելը՝ որ մինչ այժմ լուս տեսած հատորիների խմբագրութիւնը, որքան մեզ լավանի է, կատարել է պ. Արթուր Լայստը, իսկ հում Թարգմանութիւնները կատարել են այլ և անձեր:

տիճանի վերայ դրած լինելու, որ պատշաճում է նորան լուսաւոր ազգերի գրականութիւնների շարքում: Իսկ մեզ, իւր վախճանին հանգող այս դարիս մշակողներիս, մեզ մնում է դեռ մի գործ կատարել: Մեր յետնորդները, լաւ հասկանալու համար Հայաստանի պատմութիւնը և գրականութիւնը, կ'ուզենան տեղն ու տեղն նոցառութեամսիրել: Եւ իրօք ինչպէս կարող են պատմաբանը, հնագէտը մարդաբանը այլապէս նորից կենդանացնել անցեալը? Ինչպէս կարող է Ֆիլոզոֆը այլապէս ուսանել ժողովրդի բառբառները, որ այնքան անհրաժեշտ են նորա հետազօտութիւնների համար? Ինչպէս կարող է գրականագէտը առանց դրան թաթախել լեզուն ժողովրդական խօսքի աղբիւրների մէջ, ինչպէս որ այդպէս արել են մեր ռոմանտիկները? Դէհ, որ այդպէս է՝ միացնենք մեր ոյժերը այս մի քանի տարիներս որ մնում են և Հայաստանը մատչելի դարձնենք նոցա համար, որոնք մեզ պէտք է յաջորդեն: Անենք այնպէս որ նոքա կարողանան այցելել այս գեղեցիկ երկիրը առանց վտանգ կրելու սպանւել Շուլցի (Schulz) նման, կամ չարաշարտանջւել և կողոպտւել քուրդ ու թուրք աւազակներից ինչպէս Սաշօն (Sachau), և որ նոքա ազատ լինեն հաղորդեել բնակիչների հետ առանց վախենալու անյօւշ բանտերից և կախաղաններից որպէս ժորէրը: Աներեւ է որ Փրանսիական հայագէտների աշխատութիւններն են որ ամենից առաջ մեր դարի վերմանական զիտոնականների ուշքը դարձրին հայոց գրականութեան վերայ: Դոցանից առաջինը, ժամանակաշրական կարգով, Նէումանն է (Karl Friedrich Neumann): Մւսած 1792 թ. Ռայխսմանսլորֆում, Բամբէրգի մօս (Նորա իսկական անունն էր Բամբերգէր), ուր նորա հայրը մի աղքատ հրէայ վաճառական էր, նա անցաւ իւր երիտասարդութիւնը վաճառականութեան մէջ, բայց 1817 թ. կարողացաւ գալ Հայդելբէրգ, այնտեղ իւր ուսումը ստանալու համար: Այդուեղ նա լսեց Հեգէլի դասախոսութիւնները և ընդունեց բողոքականութիւնը. ապա նա ուսեց Թիրշի (Thiersch) Ֆիլոզօգիական սեմինարիալում, Միւնիէնում: 1819 թ. նա ստացաւ դասատութիւն անելու վկայական և գնաց Գեօտոտինդէն իւր ուսումը վերջացնելու համար: 1821-ից մինչ 1825 թ. նա վարեց ուսուցչութեան պաշտօն Վիւրցուրդի և Սպիրիի գիմնազներում, բայց նորա սացիոնալիստական

գաղափարները նորան այնուեղից հեռացնել տւին։ Այն ժամանակ նա իրան հարկադրւած տեսաւ դիմել զրականութեանը և նւիրւեց մանաւանդ արևելեան լեզուներին։ Նա մի քանի ժամանակ մնաց Սր. Ղազարում հայերէնը սովորելու համար, յետոյ մի ճանապարհորդութիւն արաւ Զինատան շինական գրքերի ժողովածու կազմելու համար։ Եւր վերադարձն այդ զրբերից 2,400-ը տւեց Բերլինի զրադարանին, իսկ մնացածը 10,000 հատոր զիջեց Միւնխենի զրադարանին։ Իր վարձատրութիւն նա նշանակեց պրոֆեսոր հայերէնի, չիներէնի և էթնոգրաֆիայի Միւնխենի համալսարանում (1833)։ 1852-ին նորան ժառայութիւնից հանեցին այն յառաջաւոր մոքերի համար որ նա արաւայտում էր պատմութեան դասընթացքի մէջ։ Նա շարունակեց մնալ Միւնխենում մինչ 1863 թ., ապա հաստատեց Բերլինում, ուր նա մեռաւ 17 մարտի 1870 թւականին։

Նշումանը բաւականին բազմաթիւ աշխատութիւններ է հրատարակել չինաբանութեան, էթնոգրաֆիայի և պատմութեան մասին, բայց մենք այստեղ կը զբաղենք միայն նորա հայկարանական աշխատութիւններով։ 1829-ին նա հրատարակեց նոր Ասիական թերթում (Nouveau Journal Asiatique, հատոր III) մի Յիշատակարան Դաւթի կեանքի և գրւածների մասին, որ հայկական ֆիլոսոփա էր փրկչական Վ-րդ դարում, և մանաւանդ Արիստոտէլի մի քանի գրւածների նորա թարգմանութիւնների մասին (աես Դաւթի մասին յօդւածը Biogr. univ. de Michaud, 1855, և Բարթելմի Սէնտ-Հիլէր'ինը Nouvelle biogr. générale, 1857)։ 1830-ին լոյս տեսաւ անդլիերէն Եղիշէի պատմութիւնը «արդանանց պատերազմի» The History of Vartan and of the battle of the Armenians, containing an account of the religious wars between the Persians and Armenians by Elisaeus, bishop of the Amadunians, translated from the Armenian by C. F. Neumann, London: Oriental Translation Fund, 1830, XXIV+112 երես, որին յաջորդեց 1831 թ. թարգմանութիւնը Վահրամի ժամանակադրութեան Հայոց թագաւորութեան մասին Կիլիկիայում խաչակիրների պատերազմի ժամանակ՝ Wahram's Chronicle of the Armenian kingdom of Cilicia during the

time of the Crusades, translated from the original Armenian with notes and illustrations by C. F. Neumann, London, 1831 թ., 110 էրես (տես Փրանսերէն թարգմանութիւնը Ա. Պետրոսեանի Revue de l'Orient 1864 թ., էջ 245—254 և 315—325): Ահա թէ ինչ է ասում պարոն Նէււը Վարդանի թարգմանութեան մասին (Université catholique, հասոր XX, էջ 395). «Մինիէնի գիտնական ակադեմիկոսի թարգմանութիւնը ազատ թարգմանութիւն է, որ կասարաւած է թւում ոչ այնքան վիլող գիտական մոռով որքան իրողութիւնների ընդհանուր շահի համար. նա նոյն իսկ բնագրից յայտնի տեղեր կտրատել է, որնա կրինութիւններ կամ երկարաբանութիւններ է դատել, մանաւանդուր նորա կարծիքով հեղինակը ընկել է այն ոճի մէջ որ նա անւանում է homélitique (ճարտասանական): Անձգութիւնները, որոնց համար յանդիմանել են պար. Նէււումանին, բացարրում են այն սիստեմով որնա ընդունելու հարկ է դատել, և նոյնպէս այն գժւարութիւնով՝ միշտ խիստ ճշգութեամբ որոշելու իմաստը հին հայնրէն մի բնագրի, որը առաջին անգամն է ենթարկում եւրոպական քննադատութեան և որը ոչ պակաս լիքն է քերականական հանելուկներով, քան հայոց կրասիկների մեծամասնութիւնը: Տեսնելով այն բարեխիղմ զգուշութիւնը, որով վերաբերում են նոյն իսկ Միիթարեանները իրանց հայրենիքի հին հեղինակները մեկնելու ժամանակ, այլ ևս հասկանալի են այն մի տեսակ՝ օրինական տատանմունքը, որի մէջ է լինում եւրոպացի Փիլոլոգը՝ բնագիրը կարգալու և ուսումնասիրելու ժամանակ, յայտնի տեղերի մոքի որպէս նաև փոխարերական մի քանի խօսքերի կամ պյանաբանութիւնների դիմաց: Այդ պատճառով մենք չենք հասկանում այն արհամարանքը և կծութիւնը որոնք բուրում են այն հանդիմանութիւնների միջից, որոնք, խիստ քննադատութեան անունից ուղղում են եռանդութ թարգմանիչներին, և այն էլ այնպիսի անձշղութիւնների և նոյն իսկ սիսալների առիթով, որոնք անխուսափելի են ֆակտերի նորութեան և նոյնպէս դարձածների օտարութիւնների լինելու պատճառով: Մենք չը վախեցանք ամբողջապէս արտագրելու այս շատ խրատական էջը, որի մանաւանդ վերջին նախադասութիւնը առաջարրում էնք ներկայիս յայտնի կրիտիկոսներին:

Գերմանական ամսագրերում նէռլմանը աշխատակցեց նախ 1829թ. *Hermes oder Kritisches Jahrbuch der Literatur* (Հերմես կամ քննազառական ամսագիր գրականութեան) հանդէսին, Այսպիդիդ, հատ. XXXIII, մի յօդածով այս խորագրով՝ «Հայոց լեզուն և նորա գրականութիւնը»: Դա մի շատ հետաքրքրական զեկուցումն է, որը պարունակում է Գերմանիայում կատարւած հայկական ուսմունքների պատմական տեսութիւնը: Հեղինակը այդուեղ նկարագրում է, բացի Բրանդ-Առգերի բառագրքից, Մովսէս Խորենացու (1827) և Եղնիկի (1826 թ.) Վենետիկեան հրատարակութիւնները՝ էջ 202—204 նա թարգմանում է հռչակաւոր տեղը Որմիզդի և Ահրիմանի ծննդեան մասին: 1833-ին նա հրատարակեց *Jahrbücher der Literatur* (Վիեննա, հատոր 62, էջ 58—69) մի յօդած ֆաւատոս Բուզանդի մասին, ոորա հրատարակութեան առիթով, Վենետիկի 1832: Նա այնտեղ այս կարծիքն է յայտնում թէ հայերէնը մօտիկ ազգական է պահլաւերէնի, և այդ հաստատելու համար նա առաջ է բերում մի էջ Վիլհելմ Հումբոլդտից<sup>1)</sup> Abh. d. hist. philol. Klasse d. kön. Ak. d. Wiss. zu Berlin, 1829 թ., հրատարակւած 1832-ին, էջ 25), չի տատանւում պնդելու թէ հայերէնը հնգկա-զերմանական<sup>2)</sup> ամբողջ զերդաստանի ամենահարուստ լեզուներիցն է և որ Ֆիլոլոգիական ու պատմական տեսակետից այդ լեզուի ուսումնասիրութիւնը աւելի կարևոր է քան որ և է մի ուրիշը՝ լեզուագիտական աշխարհից: Այդ յօդածի վերջում (էջ 69—71) նէռլմանը նկարագրում է բժ. Մխիթարի (Mkhithar de Her) գիրքը տենդի մասին, հրատարակւած Վենետիկի, 1832: Կ.

Յ. Կլլգէնի ամսագրում *Zeitschrift für die historische Theologie*, Լայպցիդ, 1834, հատոր IV, առաջին մաս, էջ 71—78, նէռլմանը թարգմանեց Եղնիկի գրւածքի չորրորդ մասը՝ Marcions Glaubenssystem մի տեղեկութիւնով Մարկիոնի վարդապետութեան և պարսկից կրօնի յարաբերութիւնների մասին: Այդ միևնույն հատորում՝

<sup>1)</sup> Վիլհելմ Փոն Հումբոլդտ, նշանաւոր լեզւագէտ, պատմաբան և քաղաքագէտ, եղբայրը հռչակաւոր բնագէտ Ալեքսանդր Փոն Հումբոլդտի:

<sup>2)</sup> Որ նոյնին է թէ Հնդկա-եւրոպական,

երկրորդ մաս, նա տւեց Ներսէս<sup>1)</sup> Լամբրոննացու Կիլիկիայի Տար-  
սոնի արք-եպիսկոպոսի սինողական հռչակաւոր ճառը, ներա-  
ծութիւնով և ծանօթութիւններով (որ արդէն խոալերէն թարգ-  
մանել էր հայր Յարութիւն Աւգերեանը, Վենետիկ, 1812):  
Նոյնպէս 1834-ին նէումանը հրատարակեց Սերգիյ Գլին-  
կահ ոսերէն մի բրոշիւրի (Լազարեան ճեմարան, 1831) գեր-  
մաններէն թարգմանութիւնը՝ Պատմութիւն գաղթականութեան դէպի  
Ռուսաստան 40,000 հայերի Աղերբէջանի նահանգից 1828 թ.  
(Լայպցիգ): Վերջապէս 1836-ին լոյս տեսաւ Լայպցիգում հռչակա-  
ւոր արևելագէտի հիմնական գրւածքը՝ «Փորձ հայոց գրականութեան  
պատմութեան, ազատորէն խմբագրւած ըստ Միհթարեանների աշ-  
խատութիւնների» (Versuch zu einer Geschichte der armenischen  
Literatur nach den Werken der Mechitaristen frei bearbeitet, XII+308 էջ): Այս գիրքը բաժանւած է 18 գլուխների և դասա-  
ւորւած է ըստ դարերի: Հեղինակը 1848-ին նորա վերայ աւելաց-  
րեց մի յատելւած 56 երեսի, որ խօսում է Մովսէս Կաղանկասուացու  
և Արիստակէս Լաստիվերդցու մասին, խորագրով՝ Beiträge zur  
armenischen Literatur (Նպաստներ հայոց գրականութեան հա-  
մար), Միւնխէն, 1859: Մենք չենք կարծում թէ նէումանը ուրիշ  
աշխատութիւններ ունենայ հայոց գրականութեան մասին. բայց  
եթէ սխալւում ենք, խնդրում ենք տեղեակներից որ բարի լինեն  
ցոյց տալ մեզ մեր բաց թողածը:

<sup>1)</sup> Յօդւածիս հեղինակը գրում է St. Nersès de Lambion. սական-  
չափանի է որ Ներսէս Լամբրոննացուն Հակեաստանեաց եկեղեցին սուրբերի  
կարգը չի դասեր